

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և մարմնի ղեկավարի կողմից կատարած քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

1. 2017 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում քաղաքացիներից ստացվել է թվով 22 առաջարկություն, դիմում և բողոք, որից 6-ը վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից.

| Դիմումներն ըստ բնույթի | Ընդամենը | Պատասխանվել է | որից | | | Ծանոթություն |
|---|----------|---------------|------------------------|-----------|---------------------|---|
| | | | Տրվել է դրական լուծում | Մերժվել է | Տրվել է պարզաբանում | |
| Ձեռք բերված երինջների անկման հետ կապված պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետը երկարաձգելու մասին | 1 | 1 | | | 1 | 1 դիմումատուի պարզաբանվել է, որ համաձայն «Տարածամկետ վճարման պայմանով առքուվաճառքի» N ՀՀԳՆ-ԵՏՎ-ԱԱՎ-90 պայմանագրի նրան հատկացվել է 29 գլուխ շվից ցեղի տոհմային երինջներ: Պայմանագրի 1-ին կետի համաձայն Գնորդը պարտավոր է ընդունել ապրանքը և վճարել դրա համար տարածամկետ վճարման պայմանով՝ համաձայն Պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցի: Պայմանագրի 2.4.2. կետի համաձայն Գնորդը պարտավոր է Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապա- |

| | | | | | | |
|--|---|---|---|--|---|--|
| | | | | | | <p>տասխան հրաժարվելու դեպքում ապահովել դրա պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին: Կողմերը Պայմանագրով չնախատեսված դեպքերում իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:</p> <p>Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ վճարման ենթակա նրա պարտավորությունը 2017 թվականի նոյեմբերի 15-ի դրությամբ կազմում է 3646724 ՀՀ դրամ 94 լումա, որի մարումը պարտադիր է:</p> |
| Աշխատած տարիների վերաբերյալ տեղեկանք տրամադրելու մասին | 2 | 2 | 2 | | | |
| Պտղատու ծառերի տնկիներ հատկացնելու մասին | 1 | 1 | 1 | | | |
| Գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմաների և ռեժիմների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու մասին | 1 | 1 | 1 | | | |
| Աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկաճ խոզերի | 1 | 1 | | | 1 | 1 դիմումատուի պարզաբանվել է, որ նրա կողմից տարիներ շարունակ ներկայացված նույնաբո- |

| | | | | | | |
|--|----------|--|--|--|--|--|
| <p>դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին</p> | | | | | | <p>վանդակ դիմումներին պատասխանվել է, որ 2017 թվականի ընթացքում նրա բնակության վայրում գործող համայնքային հանձնաժողովի կողմից դիմումատուին պատկանող խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկման և հարկադիր ոչնչացման վերաբերյալ լիազոր մարմին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ամփոփագիր /ակտ/ չի ներկայացվել:</p> <p>Միաժամանակ դիմումատուին տեղեկացվել է, որ ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N84-Ն որոշմամբ 2007 թվականի ընթացքում աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով կրած վնասի դիմաց սեփականատերերին օժանդակություն է տրամադրվել մարզային հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետում լիազոր մարմին ներկայացված ամփոփագրի հիման վրա, և 2007 թվականից ի վեր ՀՀ կառավարության կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը վերոգրյալ նպատակով ֆինանսական միջոցներ չեն հատկացվել:</p> |
| <p>ՀՀ հացահատիկային և հատիկաբնդեղեն որոշ</p> | <p>6</p> | | | | | <p>6 դիմում ընթացքի մեջ է:</p> |

| | | | | | | |
|---|----|---|---|--|---|---|
| մշակաբույսերի տեղական սերմնաբուծության և սերմարտադրության ծրագրի սերմնաբուծական տնտեսությունների ցանկում ընդգրկելու մասին | | | | | | |
| Բեկոնի արտադրության նպատակով իր կողմից ստեղծված խոզերի հատուկ ցեղատեսակի բուծման մասին | 1 | | | | | 1 դիմում ընթացքի մեջ է: |
| Վարձակալությամբ հողատարածք հատկացնելու մասին | 1 | | | | | 1 դիմում ընթացքի մեջ է: |
| Գյուղատնտեսական կենդանիներ ձեռք բերելու նպատակով վարկ տրամադրելու մասին | 1 | | | | | 1 դիմում ընթացքի մեջ է |
| Աշխատանքի ընդունելու մասին | 1 | | | | | 1 դիմում ընթացքի մեջ է: |
| Ընդամենը | 16 | 6 | 4 | | 2 | 10 դիմում ընթացքի մեջ է: |
| Որից՝ ՀՀ կառավարության աշխատակազմից վերահասցեագրված | | | | | | |
| «Տավարաբուծությունը և տավարի ցեղերը աշխարհի տարբեր երկրներում» տեղեկագրքի հրապարակման նպատակով | 1 | 1 | | | 1 | 1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կայացած քրե-նարկման արդյունքում որոշվել է ուսումնասիրել «Տավարաբուծությ- |

| | | | | | |
|--|---|---|--|---|---|
| տակով աջակցություն ցուցաբերելու մասին | | | | | յունը և տավարի ցեղերը աշխարհի տարբեր երկրներում» տեղեկագիրքը, որից հետո Ձեզ կներկայացվի մասնագիտական կարծիք: |
| Շիրակի մարզի Փանիկ համայնքում սպանդանոց կառուցելու գործում օժանդակություն ցուցաբերելու մասին | 1 | 1 | | 1 | 1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունում /այսուհետ՝ ծառայություն/ կայացած քննարկման ընթացքում մանրամասն պարզաբանվել է Հայաստանի « Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի «Սպանդանոցային կադրությունների զարգացման ծրագրի նպատակը, խնդիրները և իրականացումից ակնկալվող արդյունքները, ինչպես նաև սպանդանոցների կառուցմանը ներկայացվող պահանջները և պայմանները: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ Հայաստանի «ՓՄՁ» զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի «Սպանդանոցային կարողությունների զարգացման աջակցության ծրագիրը» կրելու է շարունակական բնույթ և ծառայությունը գործող օրենսդրության շրջանակներում օժանդակություն է ցուցաբերելու ծրագրի հետագա փուլերին մասնակցության խնդրում: |

| | | | | | | |
|--|---|---|---|--|---|---|
| <p>«Ազոտ» առևտրային բաժնետիրական ընկերությանը Հայաստանի Հանրապետություն պետիցիոներ և ագրոքիմիկատներ ներմուծելու կարգը պարզաբանելու մասին</p> | 1 | 1 | 1 | | | |
| <p>Կարկտահարության հետևանքով կրած վնասով պայմանավորված վարկային պարտավորությունների մարման գործում աջակցություն ցուցաբերելու մասին</p> | 1 | 1 | | | 1 | <p>1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարը 2017 թվականի նոյեմբերի 22-ի N ԱԶՀ/ՌՆ -1/10646-17 գրությամբ դիմել է «Կոնվերս բանկ», «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» և «ՖարմԿրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ-ներին հնարավորության դեպքում աջակցություն ցուցաբերելու խնդրանքով: Վերջիններիս կողմից պատասխանագրությունները ստանալուց հետո՝ Ձեզ լրացուցիչ կտեղեկացվի:</p> |
| <p>Տոհմային երինջների ձեռքբերման պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման ժամկետները մեկ տարով երկարաձգելու մասին</p> | 1 | | | | | <p>1 դիմում ընթացքի մեջ է:</p> |
| <p>Սյունիքի մարզի Տաթև համայնքի «Սատանի կամուրջ» բնական հու-</p> | 1 | | | | | <p>1 դիմում ընթացքի մեջ է:</p> |

| | | | | | | |
|---|---|---|---|--|---|-------------------------|
| շարձանի հարակից տարածքում բիզնես-ծրագրի իրականացման նպատակով հողատարածք հատկացնելու մասին | | | | | | |
| Ընդամենը | 6 | 4 | 1 | | 3 | 2 դիմում ընթացքի մեջ է: |

2017 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում կատարվել է քաղաքացիների 13 ընդունելություն, այդ թվում 3-ը մարմնի ղեկավարի կողմից

| Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված բնույթը | Ընդամենը | Տրվել է Դրական լուծում | Մերժվել է | Տրվել է պարզաբանում | Ծանոթություն |
|---|----------|------------------------|-----------|---------------------|--|
| Գյուղատնտեսական մթերքների տոնավաճառում վաճառատեղ հատկացնելու մասին | 1 | 1 | | | |
| Պտուղ-բանջարեղենի իրացման հարցում օժանդակություն ցուցաբերելու մասին | 1 | 1 | | | |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում աշխատանքի ընդունելու մասին | 1 | 1 | | | |
| Սերմացուի ձեռքբերման հարցում աջակցություն ցուցաբերելու մասին | 1 | 1 | | | |
| ՀՀ հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի տեղական սերմնաբուծության և սերմարտադրության ծրագրի վերաբերյալ պարզաբանում տալու մասին | 1 | | | 1 | Քաղաքացուն պարզաբանվել է, ծրագրի իրականացման նպատակը, խնդիրները, ծրագրում ընդգրկվելու պայմանները և դրա իրականացումից ակնկալվող արդյունքները: |
| Կարկտահարության հետևանքով կրած վնասի դիմաց աջակցություն ցուցաբերելու մասին | 1 | | | 1 | Քաղաքացուն պարզաբանվել է, որ կարկտի հետևանքով վնաս կրած գյուղացիական տնտեսությունների հատկացված աշնանացան ցորենի դիմաց կու- |

| | | | | | |
|---|----|---|--|---|---|
| | | | | | տակված պարտքերը զիջելու վերաբերյալ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ՀՀ կառավարություն ներկայացվել առաջարկություն: |
| Մետաղական կոնստրուկցիաների արտադրություն կազմակերպելու ծրագրային առաջարկի վերաբերյալ | 1 | | | 1 | Քաղաքացու հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ծախսերի հիմնավորված հաշվարկ ներկայացնելու վերաբերյալ: |
| Հավաստատումների /արժեթղթերի/ տրամադրման և գործառության կայուն կառուցողական համակարգ ստեղծելու վերաբերյալ ծրագրային առաջարկի մասին | 1 | | | 1 | Քաղաքացուն տրամադրվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված ներդրումային բիզնես-ծրագրի ձևաչափը՝ առաջարկ- նախագիծը այդ ձևաչափով ներկայացնելու համար: |
| ՀՀ պետական աջակցության ծրագրերի շրջանակներում հատկացված պարարտանյութերի և դիզելային վառելանյութերի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու մասին | 1 | 1 | | | |
| Յորենի իրացման հարցում աջակցություն ցուցաբերելու մասին | 1 | 1 | | | |
| Ընդամենը | 10 | 6 | | 4 | |
| այդ թվում անձամբ մարմնի ղեկավարի կողմից կատարած ընդունելության արդյունքները | | | | | |
| Կերային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացման ծրագրի իրականացման նպատակով ֆինանսական աջակ- | 1 | | | 1 | Քաղաքացուն պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը մշակել է սերմնաբուծության և սերմնարտադրության ծրագիր, որում պա- |

| | | | | | |
|---|---|---|--|---|--|
| ցություն ցուցաբերելու մասին | | | | | հանջարկի բացակայությամբ պայմանավորված կերային մշակաբույսերը չեն ընդգրկվել: |
| Վառելափայտ տրամադրելու մասին | 1 | 1 | | | |
| Հայաստանի Հանրապետության տեղանքին համապատասխանող գյուղտեխնիկայի արտադրության կազմակերպման վերաբերյալ առաջարկի իրականացման գործում աջակցություն ցուցաբերելու և աշխատանքով ապահովելու մասին | 1 | | | 1 | Քաղաքացուն պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի պարկը թարմացնելու նպատակով իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիրը: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ նրա անձնական գործն ուղարկվել է Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ և նրա թեկնածությունը համապատասխան աշխատանքում ընդունելու համար կքննարկվի մեքենատրակտորային կայանի ստեղծման ժամանակ: |
| Ընդամենը | 3 | 1 | | 2 | |